բանն, ուր ամբողջ ժողովուրդ խունեալ կ'սպասէին իրենց երախտագիտական շնորհակալութիւնք յայտնելու և նորին հայրապետական օրհնութիւնն ընդունելու։ Թէ և տեղն և պարագաներն, ժողովրդեան ներկայ դիրքն ձեռնհաս չէին իրենց ոգւոյն խորին և որպիսական զգացումն արժանապէս և փայլուն կերպով յայտնելու, սակայն սրտաշարժ դէպք մը ամբողջ ժողովրդեան սրտին և զգացման ներքին պատկերն կենդանացոյց։

Հարիւրամեայ ծերունի մը, որուն գլխէն ահագին զոր մը անցեր է հազար ու դէպ ա-հեղ ընդհանուր և մասնաւոր արկածներով, որ վերջընթեր օրն երիտասարդաբար նոր բացուելիք եկեղեցւոյն ճամբան կը մաքրէր երիտասարդի մը տաք սրտով և աշխոյժ գործովն, յետ հանդիսին, կրօնական հարազատ երկիւղածութեամբ խոհուն և զանդաղաքայլ կը դիմէ յառաջնորդարան ի շնորհակալութիւն Արհի Տեառն. և հանելով Արհի Եպիսկոպոսին քով առաջի բազմաթիւ հանդիսականաց ինք զինքն կը ձգէ առաջնորդին ոտքին տակ և կ'ուզէ զանոնք համբուրել աչքն յարտասուս ուրախութենէն և ամբողջ մարմնին ի զոր կ'ըսէ « Ցբսոր թրժա արև ծաղեցար մրգի համար Գերապայծառ Տէր, մրը ազգին 80—90 տարուան փափաղն և ուրախութիւն կատարեցիր ու մրը հոգւոյն պէտքն թրմիսեցուցիր » զայս կ'ըսէր իւր անուշ Մշեցի լեզուովն և կու լար աղայապէս, և այդ ուրախութեան հետ կը կցէր լալագին, կրօնքի անմիտ հալածանաց իւր տեսած տխուր պատկերն և ծանօթ քահանայից և վարդապետաց վկայական մահերն։ Եպիսկոպոսի զուարթ կերպարան և անուշխօսիկ մեծայոյս խոստմունքներն հանդարտեցին ալեզարդ ծերունին և յորդեռանդ ալեւորին։ (1)

Երեկոյեան ժամը տասին ժամերգութենէն ետքը Սրբութիւն սրբոց ի բազմոցի եռանդնալից աղօթքներ եղան մեր վեհափառ կայսեր կենաց բարօրութեան և երջանկութեան համար, և հայասէր անմահ Լեւոն ԺԳ. Փահանայապետին, և ամենապատիւ Ստեփանոս Կաթողիկոս Ա-զարեանի անգին կենաց ջերմ բարեմաղթութիւնք կատարուեցան։

Այս հանդէսն ազդեց ոչ միայն Հայ կաթողիկեայց սրտին և զգացման վերայ, այլ և մեր Էջմիածնական եղբարց վերայ ևս՝ որք մեզի լիասիրտ հանդիսակից եղան և մեծ գոհունակութեամբ ալ հանդիսավայրէն մեկնեցան։

Ստեփան Վ. Ջուհարեան
Քարտուղար Եպիսկոպոսական

ԻՇԽԱՆԱՑ ԿՂՋԻՔ

(Տես հտ. ԾԱ. էջ 485)

Բաց Նիկեփոր կայսր չէր քնանար. իրեն համար Վարդանին կրօնաւոր ըլլալը խաբէութիւն մ'էր, յաջողագոյն առթի մը սպասելով. խեղճին կորուստը որոշուեցաւ։ Նիկեփոր իւր երդման հակառակ, Վարդանայ հարստութիւնները գրաւած էր, և իրեն կողմակցաց հետ շատ գէշ կը վարուէր։ Այս չափով զոհ չեղաւ. քանի մը շաբաթ հոգիս անցեր էր, քանի որ Սաբա կրօնաւորը Բրոդիի կղզւոյն վանքին մէջ քաշուած էր, գիշեր մը երբ իւր խցիկին մէջ կը քնանար, մեծ շփոթութիւն մը լսուեցաւ. աւազակաց խումբ մը զինեալ կրօնաւորաց մէջ յարձակեցան Լիկայնացի հետևակներուն հետ որ Նիկեփորին կամաց գործակիցներն էին։ Այս վարձով բռնած Բիւզանդիոյ չարագործներն որ կեղրոնական Փոքր Ասիոյ վայրենի ժողովուրդներէն էին, յայն կայսերաց քով, մինչև դարու իտալիոյ արքունեաց վարձու բռնուած դահիճներու և սիկարեանց կը նմանէին, որք անգութ մարդասպաններ էին։

Վարսան յանկարծ անկողնոյն մէջ ցաթկեց

---

1. Այգ Մուրատ Կոյլեան։

digitised by A.R.A.R.@

նստաւ, իսկոյն կապեցին գինքը և մինչ ահռելի ձայնով կը պոռար, Լիկայոնացի մը աչքին մէջ սուր երկաթ մը խոթեց։ Երբոր քակեցին կոյր էր, և երկու արեան գետեր կը վազէին իւր ակնակապիճներէն։ Այսպէս էր Բիւզանդիոյ մէջ սովորական ճաշ, երբ որ կ'ուզէին իրենց վախ տուող մարդ մի ազատել։ Բայց այս անգամ կայսեր երդումն այնպէս հանդիսաւոր եղած էր որ այս վատ գործը, ընդհանուր ամենուն բարկութիւնը շարժեց։ Թէպէտ ամենքն ալ Նիկեփորէն կը վախնային, այսու ամենայնիւ համարձակեցան մինչև իր ականջը հասցընել իրենց տժգոհութիւնը։ Նիկեփոր իր ծանօթ նենգաւորութեամբ աստիկ ցաւ և շատ մեծ բարկութիւն մը ձևացուց, երդում ընելով ծիրակուսին մէջ յանուն Աստուծոյ և սուրբերուն, որ այս եղերան մէջ ամենևին մաս չունէր և պիտի պատժէր այն ասազակները։ — Ասոնք իր հրամանովը Ս. Սոփիա մայր եկեղեցւոյն մէջ պահուրտած էին, ուսկից որ գաղտուկ փախցրնել տուաւ։ Պալատին գաղտնի սենեակներուն մէջ քաշուած, իւր սուտ արցունքներովը ուզեց իր քով եղողներն խաբել, բայց ոչ ոք հաւատաց իւր ցըցուցած ցաւոց ճշմարտութեանը։

Վարդան իւր պժգալի վէրքերէն բժշկուելով մեծ արիասրտութեամբ կրեց այս կենդանի մահը. իւր օրերը անցուց ծանր ապաշխարութեանց մէջ, անասունի մերթ հագած, գլուխը բաց և ատերբ մերկ ոտաւ և ձմեռ, միայն ջուր կը խմէր, և կերած հացն ալ իր ձեռքովը կը շինէր։ Ջուսեց այլ ևս իւր կինը և տղաքը ընդունել, և գիրենք ալ համոզեց որ վանքի մը մէջ քաշուին, իրենց մնացած քիչ մը ստացուածքը բարեբարութեան հաստատութեանց թողով։ Ամէն կողմանէ բարեպաշտներ Բրոդի կը վազէին սուրբ կրօնաւորին աղօթքը խնդրելու, որ ատեն մը կայսր պիտի ըլլար, իրենց տղաքը կը բերէին, որ օրհնէ, և հիւանդները՝ որ բժշկէ. այս կերպով անցուց Նիկեփորին, Զարա կամ Խաչիկին, և Միքայէլ Ռանկապէին խռովելալ ժամանակներն, և ինքզինքն ամեն բանէ զրկելով, խիստ ապաշխարութեամբ մեռաւ սուրբի անուամբ, Լեւոն հակայզնին կայսրութեան ատեն, որ աւաղ զինքը մատնած էր։

Յովհաննէս Զմշկիկի կայսրութեան ատեն, որ Ռուսաց յաղթեց և վերջին հոմանին եղաւ այն հրապուրիչ և լկսի թէոփանէին, որ իւր անարժան տոփանաքն Բիւզանդիոյ պատմութեան ամբողջ մէկ ժամանակն լեցուցած է, և որ ինքն ալ ատեն մը Բրոդիի կղզին աքսորուեցաւ, կիւրապաղատն Լեւոն Փոկաս և իր Նիկեփոր տղան, առաջին անգամ ապստամբելով Լեսբոս կղզւոյն Մեսիլինէ քաղաքը աքսորուեցան, կրցան անկէ փախչիլ նաւակով մը, և Ցարտանէլը և Մարմարայի ծովը անցան և Պոլիս մտան։ Յայտնուեցան դարձեալ մատնչի մը ձեռքը, և սուրբ Սոփիա եկեղեցին ապաւինեցան, ուսկից բռնի զիրենք դուրս հանեցին։ Այս անգամ կայսրը աչքերնին փորել տուաւ, և Բրոդիի կղզւոյն վանքերուն մէկուն մէջ զիրենք փակեց։

Անդիգոնի (Պուրդազ) կղզին Բրոդիէ շատ քիչ հեռաւորութիւն ունի, շրջեանն միայն քանի մը վարկեան կը տեւէ երթալու մէկէն միւսն։

Անդիգոնին քարոտ և աղքատ կղզի մ'է, բայց Բրոդիէն աւելի բազմամարդ է։ Նաւակայքը շատ մը տուներով պատած է, որ յիրաւի պզտիկ քաղաք կը ձևացրնեն։

Առաջ Անդիգոնին Բանորմաս կը կոչուէր, կը կարծուի որ այժմեան անունը երեւելի Անդիգոն Աղէքսանդրի զօրավարին անունն է։ իր տղան Դեմետրիոս Պոլիորկէտ ուզեց այս կերպով իւր հօրը անունը անմահացընել, երբոր Մարմարայի ծովը եկաւ 298 ք. Ա. պատերազմելու կայսրութեան և նեղուցին ազատութեան համար, ընդ դէմ Լիսիմաքոսի. Թրակացւոյ և կասսանտրի Մակեդոնացւոյ։

Անդիգոնի արևելեան կողմը զուրկ է կանանչութենէ, իսկ Մարմարայի ծոլին կողմը ծաղկեալ է։ Շրջեանը գիւղին ասէի տուները չի հասած, մեծ նոր շինուած վանքի մը դիմացէն կանցնի, Սուրբ Գէորգ անունով, ծոլէն քիչ մը հեռու։ Այս վանքը կեղեցիկ գիրք մ'ունի, հիմա կալուած մ'է Մեկասփէլէսնի Պեղոպոնէսի երեւելի վանքին։ Կրօնաւոր մը վանահօր կողմանէ կը հակէ այս վանական կալուածոց մշակութեան։

Իշխանաց կղզեաց մէջ կրօնաւորաց վանքեր չկան հիմա։ Խալքիի գեղեցիկ վանքերը,

digitised by A.R.A.R.@

Ցունաց զորոցներ եղած են, իսկ կղզեաց միւս վանքերը կալուած եղած են, բուն Ցունաստանի և կամ Սինայ լերան վանքերուն։ Վանաց շէնքերը մեծաւ մասամբ բնակութիւն զարձած են, զորս կը վարձէն միայն ընտանեաց. հողերը մշակուած են ընդ խնամքը կրօնաւորաց, զորս հոն խրկած է իրենց մայր վանքը,

Բրոպիին պէս Անդիգոնի բլրաձև բարձր գագաթին վրայ, մեծ վանք մը կայ Ալլակերպութեան, որ Պոլսոյ առման ատեն կործանեցաւ։ Քանի մը տարի կայ, դեռ վանքին կործանած մասերը մնացեր էին, որ զեղեցիկ տեսք մը կուտային այս բարձր տեղւոյն վրայ։ Ցունաց անկախութեան պատերազմին զիւցազներէն մին այս կղզին քաշուելով իւր անդէպ աշխուժովն, այն աւերակներն բոլորովին քակեց և անոնցմէ աղօթատեղի մը շինեց։ Հին վանքը կ'ըսեն թէ Մակեդոնացին Բարսեղ կայսր շինել տուէր է, այս էր՝ Միքայէլ Գ. սպանողը, շատ մեծաշէն կայսր մը եղած է, իւր փառաւոր կայսրութեան ատեն, ինքներորդ դարուն վերջերը, կոստանդնուպոլիս բոլորովին փոխեցաւ. շինեց կամ նորոգեց աւելի քան զհարիւր եկեղեցի, հիւանդանոց, վանք, հասարակաց ջրշեղջ, թէ մայրաքաղաքին մէջ և թէ շրջակայքը։ Միշտ տանջուած իւր սպանմանին շուքէն, կը շատցընէր բարեպաշտական տեղուանքը, ներումն գտնելու համար այն սպանմանը, որով այնպիսի ատելի և միանգամայն իրեն արգելք եղողէ մը ազատեցաւ։

Անդիգոնի անունը ամենէն աւելի հռչակաւոր ընող Մեթոդիոս պատրիարքը եղաւ, որ խոստովանող անուանեցաւ, և Ցոյն եկեղեցւոյն մէջ մարտիրոսի կարգ անցած է իւր կրած անլուր չարչարանաց համար, որ պատկերամարտ կայսերաց ատեն քաշեց։ Մեթոդիոս ազնուական ընտանիքէ մ'էր, Սիկիլիոյ Սիրակուսա քաղաքէն կոստանդնուպոլիս եկած էր ուր որ մեծ ընտանեաց կրտսեր որդիքն կերթային պալատին մէջ պատիւ գտնելու համար կրօնաւոր մը ճանչած էր, որուն յորդորմամբը եկեղեցական վիճակն մնաւ, և իւր բոլոր հարստութիւնը աղքատաց բաժնեց։ Լեւոն Հայկազն կայսր և այն զառն հալածման ատեն, որում անուանի եղաւ Լեւոնի կայսրութիւնը որ մեծ թշնամի էր պատկերաց, Մեթոդիոս ի-տալիա քաշուեցաւ։ Կայսեր սպանուելէն վերջը, Միքայէլ կակաղն կայսր ըլլալով, աքսորեալ քահանայք, խոստովանողք ետ կանչուեցան, և Մեթոդիոս Կոստանդնուպոլիս զարձաւ, նորապակ կայսեր նամակ մը բերելով Հռովմայ Քահանայապետէն։

Քիչ ատենէն յայտնի տեսնուեցաւ որ իւր խոստմանցը հակառակ, Միքայէլ կ'ատէր պատկերներն, իւր կրօնամոլ նախորդաց պէս, Քահանայապետին նամակը շատ լաւ չընդունեցաւ, Մեթոդիոսը բռնել տուաւ և եօթը հարիւր խարազան զարնել տուաւ։ Անոր կողմնակիցներն ալ շատ չարչարել տուաւ, ճակատնուն վրայ կարմրցած երկաթով կոխել տուաւ իբր հերետիկոս ոսանաւոր զրուածքով, Մեթոդիոսն ալ կիսամեռ Անդիգոնի կղզին տարուեցաւ։ Հոն շիրմի մը մէջ զրին, որ առաջ գերեզման եղած էր. քարէ վանդակ մ'էր և երկու աւազակներ ընկեր տուին իրեն։ Ասանդութիւնը կ'ըսէ, թէ եօթը տարի ապրեցաւ այն պզտիկ զժոխքին մէջ, որ շատ հաւատալի չ'երևնար։ Դարձեալ աւանդութիւն մը կ'ըսէ, թէ ամեն շաբաթ, խեղճ ձկնորս մը կը բերէր մարտիրոսին քիչ մը ձէթ, որչափ որ պէտք էր կանդեղին, որպէսզի քիչ մը լոյս ըլլայ այդ անբացատրելի բանտին մէջ։ Օր մը խեղճ մարդը չկրցաւ բերել, և հրեշտակներն վազեցին, հայրապետին աղօթից, և ձկնորսին տեղ իրենք կանթեղը լեցուցին։ Գողերէն մէկը մեռաւ, և ահուելի չարասրտութեամբ հոն ձգեցին դիակը։ Մեթոդիոս պարտաւորեցաւ այդ փտեալ դիակին զարշահոտութեան համբերել, և պարապ հանելով անոնց առած տանջանքներն, ջանաց զղջումի բերել միւս քովի ընկերը։ Կ'աւելցընեն սրբոց պատմագիրք, որ այն աւազակն ալ զղջաց և սուրբ եղաւ։

Միքայէլի յաջորդեր էր իր Թէոփիլոս տղան, քաջ իշխան մը որ Բիւզանդիոյ պատմութեան մէջ մեծ անուն ձգեց. բայց հօրը կրօնական կռիւներու մէջ ինքն ալ նեռուեցաւ։ Իր թագաւորութեան ժամանակ ամենէն մեծ պատկերամարտից հալածանքն սկսաւ։ Գրիչ մը չկրնար նկարագրել ինչ չարչարանքներ տուին բազմաթիւ կրօնաւորաց, որք չէին ուզեր պալատին ամենակարող վարդապետութիւնը ընդունել։ Բայց զարմանալի բան է որ

digitised by A.R.A.R.@

այն փոխոխամիա Թէոփիլոսի ատեն Մեթոդիոս քանի մը օր ազատութիւն ունեցաւ։ Ըստ պատմագրաց այս իշխանը շատ ուսումնասէր ըլլալով, և չկրելով ուրիշներէն հակնալ իր մէկ կարոցած գրքին առարկութիւններն, միտքը եկաւ Մեթոդիոս, որուն գիտութիւնը անուանի էր, և որ ասանկ երկար մարարիրոսութեամբ սրբութեան մեծ համբաւ ստացած էր։ Էր։ Խրկեց իրեն իւր սենեկապետներէն մէկը և շուտ մը պալատ բերել տուաւ։ Մեթոդիոս մեկնեց այն մութ մասը և Թէոփիլոս այնչափ սքանչացաւ՝ որ զինքը քովը պահեց։ Բայց այն անվախ մարդը, որ արժանի եղաւ խոստովանողի փառաւոր անուան, հազիւ թէ իւր ազատութիւնը գտաւ, սկսաւ կտրճութեամբ քարոզել պատկերամարտից դէմ։ Կայսրը ոսաւոր բարկացած, զարձեալ ձաղկել տուաւ ժողովրդեան դիմաց, և մեծ պալատին գետնափորաց մէջ բանտեց։ Այս անգամ կարիճ բարեկամներ գլխերանց բանտին զուռը կոտրեցին և դուրս հանեցին խեղճ վարդապետը, որ քիչ մը ատեն պահուտած կեցաւ։ Թէոփիլոս զարձեալ ուզեց բռնել տալ, բայց Մեթոդիոս անոր մոտց վրայ անզգալի կերպով իշխեր էր, և այն ատենուան Բիւզանդիոյ կայսերաց պէս Թէոփիլոս ալ շատ սիրող ըլլալով Աստուածաբանական նրբին խնդրոց, կ'ախորժէր Մեթոդիոսի մանիկ լսել, որ Աստուածաշնչի մէջ գրտնուած պատկերաց վարդապետութիւնը կը մեկնէր անոր։

Հարայարելի

Ի ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ *

Մութ էր երկինք, մութ ամպերով,
Ջիւնի պատանք ծածկէր զ'երկիր,
Հարուսան ի' խիզճ՝ ագքսան ի'սով՝
Ցանկրէին անկարեկիր
Փոթորկէլից քամին հեծէր
Հոգեարքի զինչ հառաչանք,
Սառեցնէր շորցնէր հիւծէր,
Բերելով հեռն ցաւ ու տանջանք։
Ցակայն հրեշտակք իրենց թեւօք
Ամպերն իսկոյն վանեցին բաց,
Եւ լուսաւոր աստեղց ի'կոց՝
Սիրոյ լապտերն վառեց Աստուած.
Այո՛ սիրոյ էր լապտերն
Այն գիսաւոր աստղն ամէհի,
Որ լուսափայլ մեզ աւետէր [մեզի։
Ի' մուր ծնած փրկչին զալուստն յայտնէր
Փափկամարմին այն մերկ մանկան
Որ գողգոջուն ննջէր մրսկոտ
Ախոռի մէջ ի սէր մարդկան,
Եղանց գառանց շնչին կարօտ։
Նա մեզ համար ազնիւ եղբարք
Ցնաւ մեռաւ մերկ խեղճ ա'ագքատ
Որպէս զի մենք լինինք արարք,
Բարւոյն ի' սէր միշտ ի' նրկատ։
Մենք որ փափուկ տաք անկողնում
Ծրընինք հանգչինք ու մեռանինք,
Կամ վայելենք հանդէր խնդում,
Գգուանք ծնողաց, խաղ եւ յարկինք,
Ցիշենք մանուկն ախոռին մէջ,
Որ ի' սէր մեզ ագքատացաւ
Բառնալ զմեզս խոռնք ու վէճ,
Որ ամաքէ մարդկութեան ցաւ։

1888 14 դեկտ. Կ. Պոլիս

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

* Վաղամեռիկ անմահանուն դերասանին, և միանգամայն ազգիս և օտարաց սիրելի Պ. Հ. Ադամեանի ոտանաւոր գրուածոց բնագրերն մեզ յայտնուած լինելով (ի Պ. Լօրենցիոս Ադամեանէ) Բաղմավիպի միջոցաւ կը սկսինք ի լոյս ընծայել, չնայելով արդէն քանի մի այս ինչ կամ այն թերթից մէջ հրատարակուածներուն, ի վերջոյ ինչպէս յանձնողին՝ նոյնպէս մեր փափագն է նաև առանձին հատորիկով մի հրատարակել։

digitised by A.R.A.R.@